ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 77 - Ա **12 մայիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.21-րդ կետի «գ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանի պահանջները

կարգադրում եմ՝

1. Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝

1)2015-2016 ուսումնական տարվա շրջանավարտների «Վերջին դաս» խորագիրը կրող միջոցառումները անցկացնել միայն դպրոցներում՝ ս/ թ մայիսի 27- ին, դասացուցակով նախատեսված վերջին դասաժամին

2)բնակության վայրից դուրս դպրոցականների էքսկուրսիաների և այլ միջոցառումների կազմակերպումը համաձայնեցնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ ու ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները դպրոցականների առողջությունն ու կյանքի անվտանգությունն ապահովելու համար

3) 2015-2016 ուսումնական տարվա աշակերտների փոխադրման (գիտելիքների ստուգման), ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն և 2016 թվականի մայիսի 6-ի N 415-Ա/Ք հրամաններով հաստատված կարգերի պահանջներին համապատասխան

4) սույն կարգադրությունը ընթերցել բոլոր դասարաններում և մասսայականացնել ծնողական ժողովներում:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ համագործակցել մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ՝ կազմակերպելու և պատշաճ մակարդակով անցկացնելու շրջանավարտների «Վերջին դաս» միջոցառումները:

3. Առաջարկել ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությանը (պետ՝ Ա. Ադամյան)՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել շրջանավարտների «Վերջին դաս» միջոցառման և միասնական քննությունների օրերին հասարակական կարգի պահպանման ուղղությամբ:

4. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը /պետ՝ Գ. Բաղալյան/՝ մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում վերահսկել սովորողների փոխադրման (գիտելիքների ստուգում), ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման աշխատանքները:

5. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /վարիչ՝Հ. Շահբազյան/՝ տեղական մամուլով, հեռուստատեսությամբ և ռադիոյով լուսաբանել քննությունների ընթացքը:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

7. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ